ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ
ԱԿՏՈՒԱՐ

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: Սկսած 2019 թվականից իրականացվել են աշխատանքներ ապահովագրական ծածկույթի գնահատման, հիմնական ծառայությունների փաթեթի որոշման, համակարգում ըստ բնակչության առանձին խմբերի ծախսերի որոշման ուղղությամբ: 2019 և 2023թվականներին հանրային քննարկման է ներկայացվել ԱՀԱ ներդրման հայեցակարգը, իսկ 02.02.2023թ-ին այն հավանության է արժանացել Կառավարության կողմից: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից, իսկ 2023 թվականը համարվում է ԱՀԱ ներդրման նախապատրաստման տարի, որի ընթացքում պետք է կատարվի յուրաքանչյուր փուլի հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների ծախսերի գնահատում, ակտուարական հաշվարկների միջոցով հաշվարկվի ապահովագրական վճարի չափը:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, ԱՀԱ փուլային ներդրմանը պատրաստ լինելու նպատակով, Առողջապահության նախարարությանն անհրաժեշտ է ակտուարական հաշվարկների իրականացում համապատասխան ակտուարի ներգրավմամբ՝ սույն աշխատանքի նկարագրով նախատեսված գործողությունները սահմանված ժամկետներում իրականացնելու, ինչպես նաև ԱՀԱ ներդրման այլ միջոցառումներով նախատեսված ուղղություններով ակտուարի խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Առկա տվյալների հիման վրա պետական առողջապահական ծախսերի գնահատում, առողջապահության բնագավառի վիճակագրական տվյալների գնահատում, տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների բազաների գնահատում, սպառողական գների ինդեքսի, ինֆլյացիայի ցուցանիշների գնահատում:
2. Հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների ծախսերի գնահատում՝ հիմնվելով գոյություն ունեցող ակտուարական մոդելի վրա,

3. Ըստ շահառուների տարբեր խմբերի փաստացի տվյալների ապահովագրական ծախսերի գնահատում՝ ելնելով հիմնական և նվազագույն ծառայությունների ցանկի վրա,
4. ըստ շահառուների փաթեթների ծախսերի ապահովագրական վճարի հաշվարկում՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը և ապահովագրության ներդրման յուրաքանչյուր տարվա ընթացքում ապահովագրվող շահառուների թիվը,

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ակտուարի աշխատանքից ակնկալվում է ստանալ հետևյալ արդյունքները;

1. Առկա տվյալների հիման վրա պետական առողջապահական ծախսերի գնահատման, ինչպես նաև ապահովագրական ծածկույթի ծախսերի հաշվարկմանն առընչվող առողջապահության բնագավառի վիճակագրական տվյալների գնահատման, տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների բազաների գնահատման, սպառողական գների ինդեքսի, ինֆլյացիայի ցուցանիշների գնահատման վերլուծական աղյուսակների ստացում:
2. Ակտուարական մոդելի կառուցում՝ հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների գնահատված ծախսերով,
3. Ըստ բնակչության տարբեր խմբերին մատուցված փաստացի ծառայությունների տվյալների ապահովագրական փաթեթում ներառված ծառայությունների խմբերի ծախսերի գնահատման աղյուսակների կազմում:
4. Ըստ շահառուների փաթեթների ծախսերի ապահովագրական վճարի համեմատական աղյուսակներ՝ ապահովագրության ներդրման յուրաքանչյուր տարվա շահառուների թվերի ներառմամբ:

Բացի վերը նշված աշխատանքներից, Ակտուարը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Ակտուարը նաև պետք է պատրաստի պրեզենտացիա/ներ, որտեղ պետք է նկարագրվեն առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները, ինչպես նաև պետք է ներկայացնի դրանք ըստ ԱՀԱ ներդրման աշխատանքային խմբի նախագահի կողմից ներկայացված անհրաժեշտության:

ՓՈՐՁԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Աշխատանքային փորձի հիմնական պահանջներ

- Տնտեսագիտական կամ մաթեմաթիկական բարձրագույն կրթություն
- Վիճակագրական վերլուծության փորձ, դրա համար կիրառվող համակարգերի իմացություն (SPPS), մասնակցություն տնային տնտեսությունների հետազոտություններին, տվյալների բազայի հետ աշխատելու փորձ,
- Պետական մարմինների կողմից տրամադրված թույլտվություն՝ Հայաստանում ակտուարական և աուդիտորական գործունեության համար;
- Մասնակցություն ակտուարական/աուդիտորական դասընթացներին,
- Աուդիտորական միջազգային ստանդարտների, Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ և ՀՀ ապահովագրական օրենսդրության և կարգավորումների իմացություն: Հաշվապահական և ապահովագրական ծրագրերի իմացություն (Armsoft, Lsoft, Lite soft)
- Նվազագույնը 10 տարվա աշխատանքային փորձ ակտուարական ոլորտում՝ ներառյալ ապահովագրական ընկերություններում աշխատանքը, որպես պատասխանատու ակտուար,
- Նվազագույնը 5 տարվա աշխատանքային փորձ աուդիտորական ոլորտում՝ ներառյալ ապահովագրական ընկերությունների, բանկերի, կրեդիտորական ընկերությունների և այլ ֆինանսական կառույցների աուդիտը,
- Օտարերկյա կամ ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների ակտուարական գործառնություններ և ռիսկերի գնահատման հեռավար մասնակցություն,
- Նվազագույնը 15 տարվա փորձ վիճակագրական, պահովագրական, միջազգային և հանրային սեկտորներում,
- Մակրոտնտեսական ազդեցության գնահատման ունակություններ, ՀՀ և օտարերկրյա ֆինանսական ընկերությունների մակրոտնտեսական ազդեցության գնահատման մոդելների զարգացման և կիրառման մեջ մասնակցություն

Այլ պահանջներ

- Վերլուծական, տվյալների մշակման, խորհրդատվական ունակություններ և գիտելիքներ

- Գերծանրաբեռնված օրակարգով աշխատելու կարողություն, թիմային աշխատանքի և հաղորդակցման ունակություններ
- Գիտական հետազոտական աշխատանքներում մասնակցությունը կդիտվի որպես առավելություն
- Անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն